Մենք Հոգածու Ենք Ձեր Գաղտնիության Նկատմամբ

Ներքևում ուրվագծվում է հղումների գործընթացի միջոցով մեր հավաքած անձնական տեղեկությունը, թե ինչու՞ ենք հավաքում այն և ձեր Գաղտնիության Իրավունքները:

Ի՞նչ տեսակի տեղեկություններ ենք հավաքում

Կարող ենք ձեր մասին հավաքել բոլոր հետևյալ տեղեկությունները կամ նրանց մի մասը՝ ձեր անունը, հասցեն, ծննդյան թվականը, որոշ նյութական տեղեկություն և տեղեկություն ձեր առողջության մասին: Կարող ենք նաև ձեզանից ուզել ձեր բժշկական պատմությունը, ձեր ստացած դեղերը և որևէ առողջական խնդիր, որ ունեք՝ որակավոր առողջապահական ծառայություններ ընծայելու համար:

Ի՞նչ ենք անում այդ տեղեկություններով

Ձեր մասին տեղեկությունը օգտագործում ենք որոշելու, որ պայմանունա՞կ եք մեր ծրագրին մասնակցելու համար: Այն նաև կարող է օգնել, որ համապատասխան հղում կատարենք և ձեզ բուժենք: Մենք հոգածու ենք ձեր առողջական տեղեկության պահպանման նկատմամբ:

Ուրիշ ո՞վ կարող է տեսնել ձեր տեղեկությունը

Մենք ձեզ վերաբերվող տեղեկությունը կարող ենք բացահայտել միայն ըստ օրենքի թույլատրության:

Գրանցվելու հավանությունը տալուց հետո, ՀԱԲ-ի Մատակարարը ձեզ կտա մի ամբողջական «Գաղտնիության Պրակտիկայի Ծանուցագիր (ԳՊԾ»): Նաև կստանաք լրիվ տեղեկություն ձեր գաղտնի առողջական տեղեկության մասին, որը թերևս հավաքենք:

Եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ ձեր գաղտնիության իրավունքների մասին, խնդրում ենք դիմել Լոս Անջելոս Քաունթիի Հոգեկան Առողջության Բաժանմունքի Հիվանդների Իրավունքների Բաժին (213) 738-4888 համարով:

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ ՔԱՈՒՆԹԻ
ՎԵՐԱԿԱՑՈՒՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի Անդամ

Gloria Molina
Առաջին Շրջան

Mark Ridley-Thomas
Երկրորդ Շրջան

Zev Yaroslavsky
Երրորդ Շրջան

Don Knabe
Չորրորդ Շրջան

Michael D. Antonovich
Հինգերորդ Շրջան

County of Los Angeles
Department of Mental Health
Older Adult Programs Administration
550 South Vermont Avenue, 6th Floor
Los Angeles, CA 90020

Լոս Անջելոս Քաունթի
Հոգեկան Առողջության Բաժանմունք

Marvin J. Southard, D.S.W.
Տնորեն

Լրիվ Սպասարկման Գործընկերություն

(ԼՍԳ)

Ավելի Տարեց Չափահասներ (60+ տարեկան)

Մտային Առողջության Սպասարկման Ակտ
Լրիվ Սպասարկման Գործընկերություն Ավելի Տարեց Չափահասների Համար

Լոս Անջելոս Քաունթիի Հոգեկան Առողջության Բաժանմունքը մեծ հաճույքով ձեզ է ներկայացնում այս տեղեկատու թերթիկը, որ ձեզ համար կնկարագրի այն ծառայությունները, որոնք տրամադրելի են Լրիվ Սպասարկման Գործընկերություն Ավելի Տարեց Չափահասների Համար-ի միջոցով:

Ի՞նչ է Լրիվ Սպասարկման Գործընկերությունը (ԼՍԳ) Ավելի Տարեց Չափահասների Համար:

ԼՍԳ Ծրագիրը նախատեսված է 60 տարեկան և ավելի տարեց չափահասների համար, ովքեր կօգտվեն և շահագրգռված են մասնակցություն բերել մի ծրագրի, որը ստեղծվել է լուծում գտնելու ձեր ֆիզիկական, զգացական և բնակության պայմանների կարիքներին:

Ինչո՞վ է Ավելի Տարեց Չափահասների համար ԼՍԳ-ը տարբեր հոգեկան առողջության կլինիկայում ընծայվող սպասարկումից:

ԼՍԳ Ծրագրերը կարող են ընծայել ամեն տեսակի ծառայություն, որը գլում անցնում է ավանդական հոգեկան հիվանդության արտահիվանդանոցային ծառայություններից: ԼՍԳ Ծրագրի մասնակիցները իրենց տրամադրության ներքո ծառայություններ կունենան օրեկան 24 ժամ, շաբաթը 7 օր:

ԼՍԳ Ծրագրի Ծառայություններ

ԼՍԳ ծրագիրը ընծայում է ամբողջական, լարված հոգեկան առողջության ծառայություններ անհատներին, իրենց տանը և համայնքներում: Նման ծառայությունների կարիք ունեցող անհատների համար հետևյալները կազմում են օրինակները այն ծառայությունների, որոնք կարող եք ստանալ՝ եթե մասնակցեք ԼՍԳ Ծրագրի՝

* Խորհրդատվություն
* Օգնություն՝ ձեր բժշկի ժամադրությունները դասավորելու և ձեզ այնտեղ հասցնելու համար
* Փոխադրություն, որը ձեզ ձեր տնից կվերցնի և կտանի այնտեղ, որտեղ պետք է գնաք, ապա կվերադարձնի տուն:
* Օգնություն՝ ստանալու ձեզ անհրաժեշտ բոլոր դեղերը, որպեսզի մնաք առողջ:
* Օգնություն՝ գտնելու մի բնակության վայր, կամ օգնություն՝ որ մնաք այնտեղ, որտեղ բնակվում եք ներկայումս:
* Օգնություն՝ ստանալու նյութական և առողջական նպաստները, որոնց իրավասու եք:
* Բուժում վնասակար մոլություններից, ինչպիսիք են ոգելից խմիչքների օգտագործումը և դեղատոմսային դեղերի սխալ օգտագործումը:
* Ձեզ հետ աշխատելու սահմանված մի անձ, որպեսզի մշակեք և հասնեք ձեր նպատակներին, որոնք կարևոր են ձեզ համար:

Հետաքրքրվա՞ծ եք ԼՍԳ Ծառայություններով:

Որպեսզի նկատի առնվեք Ավելի Տարեց Չափահասի ԼՍԳ-ի համար, անհրաժեշտ է մի հղում ներկայացնել և պայմանունակության զննման ենթարկվել: Եթե ձեր հղումը լրացնում է պայմանունակության կարգերը, հղումը կվերանայվի ԼՍԳ ծրագրերի և ՀԱԲ-ի մասնագետներից կազմված մի խմբի կողմից: Կենտրոնացված Իմպակտ Միավորի դերն է երաշխավորել, որ պայմանունակ անհատներ ստանան ԼՍԳ ծառայություններ: Եթե ունեք որևէ հարց հղումի գործընթացի կամ ԼՍԳ ծառայությունների մասին, խնդրում ենք դիմել՝

Կամ դիմեք՝

Ավելի Տարեց Չափահասների ԼՍԳ
Կենտրոնացված Իմպակտ Միավոր
(213) 351-5344